

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից չէ.

- 1) համալիրությունը
- 2) կոնկրետությունը
- 3) տարածականությունը
- 4) ռիթմիկությունը

2


Հյուսիսային կիսագնդում կեսօրին լեռների ո՞ր լանջերն են ավելի շուտ ազատվում ձյունից.

- 1) հյուսիսային
- 2) հյուսիսարևելյան
- 3) հարավային
- 4) հարավարևելյան

3

Նկար 1.- ում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:

- 1) գլանային
- 2) ազիմուտային
- 3) կոնային
- 4) հասարակածային



նկար 1.

4

Բնութագրումով որոշել վարկածը.

Ելակետ ընդունելով այդ վարկածը՝ գիտնականները եզրակացրել են, որ Երկրի վրա կուտակված հսկայածավալ ջուրն արտահոսել է ընդերքից, Երկրի տաքացումը սկսվել է կենտրոնից: Ո՞րն է այդ վարկածը:

- 1) երկնաքարային
- 2) խորքային գրավիտացիոն
- 3) միզամածային
- 4) պատահարային (աղետային)

5

Արեգակը հյուսիսային արևադարձի վրա լինում է.

- 1) աշնանային գիշերահավասարի օրը
- 2) ձմեռային արևակայության օրը
- 3) գարնանային գիշերահավասարի օրը
- 4) ամառային արևակայության օրը

6

Երկրի մակերևույթից դեպի խորքը ջերմությունն աստիճանաբար.

- 1) մնում է անփոփոխ
- 2) բարձրանում է, այնուհետև՝ իջնում
- 3) նվազում է
- 4) բարձրանում է

7

Ո՞ր պլատֆորմն է առաջացել Լավրասիայի տրոհումից:

- 1) Հյուսիսամերիկյան
- 2) Արաբական
- 3) Հարավամերիկյան
- 4) Հնդկական

8


Երկրային մյուս ոլորտների հետ համեմատած՝ մթնոլորտը

- 1) ամենակարծրն է
- 2) ամենախիտն է
- 3) ամենաթեթևն է
- 4) ամենածանրն է

9

Նկար 2-ում պատկերված է.

- 1) գիշերային բրիզ
- 2) ձմեռային մուսսոն
- 3) ամառային մուսսոն
- 4) ցերեկային բրիզ



10

Ո՞ր պնդումն է ճիշտ.

Արևադարձային լայնություններում մայրցամաքների արևմտյան ափերի երկայնքով անցնող սառը ծովային հոսանքները.

- 1) նպաստում են օդի ջերմաստիճանի բարձրացմանը
- 2) չեն ազդում մերձափնյա տարածքի կլիմայի վրա
- 3) խոչընդոտում են տեղումների առաջացմանը
- 4) նպաստում են տեղումների առաջացմանը

11

Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2200 մ է, իսկ գետաբերանինը՝ 1000 մ: Գետի անկումը կլինի.

- 1) 1200 մ
- 2) 2000 մ
- 3) 1000 մ
- 4) 2200 մ

12

Ո՞ր բնական զոնայում են տարածվում բառբարն ու շշածառը:

- 1) լանատերև անտառների
- 2) հասարակածային մշտադալար անտառների
- 3) սավաննաների
- 4) փշատերև անտառների

13

Ո՞ր բնական զոնայում են ապրում փիղն ու ընձուղտը:

- 1) անապատների
- 2) լայնատերև անտառների
- 3) սավաննաների
- 4) տափաստանների

14

Ո՞ր կլիմայական գոտին է բաժանվում երեք մարզի՝ միջերկրածովային, ցամաքային, մուսսոնային:

- 1) մերձարևադարձային
- 2) մերձարկտիկական
- 3) մերձանտարկտիկական
- 4) մերձհասարակածային

15

Որո՞նք են միջին հասակի կամ հին լեռնաշղթաներ.

- 1) Մեծ Կովկասը և Հինդուկուշը
- 2) Պիրենեյները և Կարպատները
- 3) Անդերը և Ալպերը
- 4) Դրակոնյանը և Կապին

16

5000 մ-ից բարձր լեռնագագաթներ են.

- 1) Օրիսաբան և Դեմավենդը
- 2) Ֆուձիյաման և Վեգուվը
- 3) Կլյուչևսկայա Սոպկան և Էլբրուսը
- 4) Մոնբլանը և Կամերունը

17

Վինսոն լեռնագագաթը հվ. լ. 78°-ի վրա է: Որքա՞ն է Վինսոնի ստորոտից հարավային բևեռ իրական հեռավորությունը:

- 1) 8658 կմ
- 2) 1200 կմ
- 3) 780 կմ
- 4) 1332 կմ

18

Ընտրել Հարավային Ամերիկայի բնական զոնաների տեղական անվանումների և բնական զոնայի կամ այն ընդգրկող տարածքի համապատասխանությունների ճիշտ շարքը.

ա. պարամոս	1. խոնավ հասարակածային անտառները
բ. պամպա	2. բարձրալեռնային մարգագետինները Անդերում
գ. սելվաս	3. սավաննաները՝ Բրազիլական սարահարթում
դ. կամպոս	4. մերձարևադարձային տափաստանները Լա-Պլատայի դաշտավայրի հարավում

- 1) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 2) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 3) ա-2, բ-1, գ-4, դ-3
- 4) ա-2, բ-4, գ-1, դ-3

19

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Պանամայի նավարկելի ջրանցքով միանում են Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսները:
- 2) Դրեյկի նեղուցով Հրո երկիր կղզին բաժանվում է Անտարկտիդայից:
- 3) Մագելանի նեղուցով Հրո երկիր կղզին բաժանվում է մայրցամաքից:
- 4) Պանամայի պարանոցը հարավային կիսագնդում է:

20

Ատլանտյան օվկիանոս թափվող գետ է.

- 1) Կոլորադոն
- 2) Կոլումբիան
- 3) Մակենզին
- 4) Միսիսիպին

21

Ո՞ր շարքում սխալ կա.

- 1) Տանգանիկա, Նյասա, Շարի—լճեր
- 2) Ջամբեզի, Նեդոս, Օրանժ—գետեր
- 3) Դրակոնյան, Կապի, Ատլասի—լեռներ
- 4) Նամիբ, Կալահարի, Սահարա—անապատներ

22

Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:
- 2) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հնեան:
- 3) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:
- 4) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:

23

Ո՞ր թերակղզիներն են մխրճվում Մեքսիկական ծոց.

- 1) Ֆլորիդա և Յուկատան
- 2) Յուկատան և Կալիֆոռնիա
- 3) Ֆլորիդա և Կալիֆոռնիա
- 4) Յուկատան և Լաբրադոր

24

«Լեռնային համակարգ — լեռնագագաթ» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ապալաչներ—Կոսցյուշկո
- 2) Էլբուրս—Դեմավենդ
- 3) Անտարկտիկական Անդեր—Ակոնկագուա
- 4) Մեծ Կովկաս—Մեծ Արարատ

25

Ո՞ր շարքի բոլոր ծովածոցերն են համարվում նույն օվկիանոսի մաս.

- 1) Սիամի, Պարսից, Ադենի
- 2) Ադենի, Պարսից, Բենգալական
- 3) Բենգալյան, Օմանի, Սիամի
- 4) Օմանի, Բիսկայան, Բոտնիկական

26

ԽՍՀՄ-ի կազմում չի եղել.

- 1) Ռումինիան
- 2) Լիտվան
- 3) Էստոնիան
- 4) Մոլդովան

27

Ո՞ր շարքի բոլոր երկրներն անմիջական ելք չունեն դեպի ծով.

- 1) Դանիա, Չեխիա, Աֆղանստան, Բուլղարիա
- 2) Ադրբեջան, Լեհաստան, Ֆինլանդիա, Լիտվա
- 3) Բոլիվիա, Նեպալ, Շվեյցարիա, Նիգեր
- 4) Հունաստան, Վրաստան, Պարագվայ, Նիգեր

28

Պետական կառավարման ձևը, երբ պետական իշխանության մարմիններին ընտրում է ժողովուրդը, կոչվում է.

- 1) թագավորություն
- 2) հանրապետություն
- 3) կայսրություն
- 4) հերցոգություն

29

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Որոշ տարածքներում բնակչության մեծ խտությունը կարող է պայմանավորված լինել բնակչության բարձր բնական աճով և ներգաղթով:
- 2) Լեոնային շրջաններն աչքի են ընկնում բնակչության խտության բարձր ցուցանիշով:
- 3) Լեոնահանքային արդյունաբերության և էքստենսիվ գյուղատնտեսության տարածման շրջաններում բնակչության խտությունը փոքր է:
- 4) Քաղաքակրթության հնագույն օջախներն ավելի խիտ են բնակեցված:

30

Բնակչության կտրուկ աճը համեմատաբար կարճ ժամանակահատվածում անվանում են.

- 1) ժողովրդագրական ճգնաժամ
- 2) ժողովրդագրական հեղափոխություն
- 3) ժողովրդագրական պայթյուն
- 4) ժողովրդագրական քաղաքականություն

31

Երկրի բնակչության թիվը կազմում է 365600 է, ծնելիության գործակիցը՝ 5‰: Ծնվածների բացարձակ թիվը կկազմի.

- 1) 1980 մարդ
- 2) 2028 մարդ
- 3) 1828 մարդ
- 4) 1628 մարդ

32

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ճապոնիայում, Շվեյցարիայում և Իտալիայում շատ բարձր է արդյունահանող արդյունաբերության բաժինը:
- 2) Մեր օրերում մեծանում է էներգիայի ոչ ավանդական աղբյուրների օգտագործումը:
- 3) Երկրաջերմային էլեկտրակայանները կառուցում են հրաբխային շրջաններում:
- 4) Համաշխարհային տնտեսությունը ունի զարգացման երեք փուլ՝ գյուղատնտեսական, արդյունաբերական և հետարդյունաբերական:

33

Մերենաշինության տեղաբաշխման սկզբունք չէ:

- 1) տեղաբաշխումը խիտ բնակեցված վայրերում
- 2) տեղաբաշխումը գիտական կենտրոնների մոտ
- 3) տեղաբաշխումը վառելիքային բազաների մոտ
- 4) տեղաբաշխումը սպառման վայրերի մոտ


34

Ընտրել «մշակութային հուշարձան — պետություն» համապատասխանությունների ճիշտ շարքը.

- | | |
|-----------------|-----------------|
| 1. Մթոունհենջ | ա. Պերու |
| 2. Թաջ Մահալ | բ. Հունաստան |
| 3. Ակրոպոլիս | գ. Մեծ Բրիտանիա |
| 4. Մաչու Պիկչու | դ. Հնդկաստան |

- 1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
- 2) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
- 3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

քարտեզ 1



35

Քարտեզ 1-ում ո՞ր ծովն է նշված Ա տառով.

- 1) Արևելաչինական
- 2) Սուլավեսի
- 3) Հարավչինական
- 4) Դեղին

36

Քարտեզ 1-ում n⁰ ր պետությունն է նշված Ձ տառով.

- 1) Թուրքմենստան
- 2) Տաջիկստան
- 3) Ղազախստան
- 4) Ուզբեկստան

37

Ավստրալիայի վերաբերյալ n⁰ ր պնդումն է ճիշտ.

- 1) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 2) Բնակչության թվով ամենախոշոր քաղաքը Կանբերան է:
- 3) Ստորերկրյա արտեզյան ջրերի պաշարներով աշխարհի առավել հարուստ երկրներից է:
- 4) Աշխարհի ամենախիտ բնակեցված պետություններից է:

38

Ամերիկայի Միացյալ Նահանգներին են պատկանում.

- 1) Սեյշելյան կղզիները
- 2) Հավայան կղզիները
- 3) Կանադյան կղզիները
- 4) Ֆոլկլենդյան կղզիները

39

Լատինական Ամերիկայի վերաբերյալ n⁰ ր պնդումն է սխալ.

- 1) Պարանա գետի վրա է կառուցված Իտայպու խոշորագույն ջրէկր:
- 2) Շաքարեղեգի մշակության ծավալով Բրազիլիան աշխարհում առաջինն է:
- 3) Խոշորագույն նավահանգիստներից են Բուենոս Այրեսն ու Ռիո դե ժանեյրոն:
- 4) Նավթի արդյունահանման ծավալով առաջատար երկիր է Չիլին:

40

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ n⁰ ր պնդումն է ճիշտ.

- 1) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 2) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Կանսկ-Աչինսկի ավազաններում:
- 3) Ոսկու արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է Կոլա թերակղզում:
- 4) Բնական գազի պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը:

41


Արաքս գետի անկումը 2615 մ է: Թեքությունը կլինի.

- 1) 2,44 մ/կմ
- 2) 1,9 մ/կմ
- 3) 7,6 մ/կմ
- 4) 3,87 մ/կմ

42

Ո՞ր լեռնագագաթն է ՀՀ-ում.

- 1) Մեծ Քիրս
- 2) Աժդահակ
- 3) Դիզափայտ
- 4) Գոմշասար



քարտեզ 2

43

Քարտեզ 2-ում Կոտայքի սարավանդը ո՞ր տառով է նշված.

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ

44

Քարտեզ 2-ում Եղեգնաձոր քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Զ
- 2) Է
- 3) Ը
- 4) Ծ

45

ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Եզդիները հիմնականում բնակվում են Սյունիքի մարզում:
- 2) Ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:
- 3) Ռուսները հիմնականում բնակվում են Վայոց ձորի մարզում:
- 4) Թվաքանակով երկրորդ ազգը ասորիներն են:

46

ՀՀ-ում ուրբանիզացվածության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզն է.

- 1) Արարատը
- 2) Արմավիրը
- 3) Շիրակը
- 4) Սյունիքը

47

ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մետաղաձուլության մասնագիտացված ուղղություններից է մոլիբդենի արտադրությունը:
- 2) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 3) Ալյումինի արտադրությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 4) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:

48

Ո՞ր մարզում չկա երկաթուղային կայարան.

- 1) Վայոց ձոր
- 2) Շիրակ
- 3) Լոռի
- 4) Գեղարքունիք

49

Արագածոտնի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տարածքի բարձրաչափական նիշերի մեծ տարբերության պատճառով կլիման բազմազան է:
- 2) Հիմնական ջրային զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարտ և Ամբերդ գլխավոր վտակներով:
- 3) Հողային ծածկույթում գերակշռում են կիսաանապատային հողերը:
- 4) Ընդերքը հարուստ է հրաբխային ապարատեսակներով:

50

Կոտայքի մարզում բուսաբուծության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) հացահատիկի մշակությունը
- 2) պտղաբուծությունը
- 3) բանջարեղենի մշակությունը
- 4) ծխախոտի մշակությունը

51

Բուսական ռեսուրսների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում չէ:

- 1) անտառների ստեղծումը
- 2) աղակալված հողերի լվացումը
- 3) արգելոցների ստեղծումը
- 4) գենոֆոնդի պահպանումը

52

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրն ունի զուտ տնտեսական բնույթ:
- 2) Առավել աղտոտված են Համաշխարհային օվկիանոսի ներքին ծովերը:
- 3) Ցամաքի և օվկիանոսի շփման գոտում ձևավորվել է համաշխարհային օվկիանոսային տնտեսությունը:
- 4) Համաշխարհային օվկիանոսի աղտոտիչների մեջ գլխավորը նավթը և նավթամթերքն են:

53

Ո՞ր տարածաշրջանն է աշխարհում առաջինը աղքատության մակարդակով:

- 1) Կենտրոնական Ասիան
- 2) Արևմտյան Եվրոպան
- 3) Կենտրոնական Աֆրիկան
- 4) Հյուսիսային Ամերիկան

54

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
- 2) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սմոգը, թթվային անձրևները և աղմկային աղտոտումը:
- 3) Էկոլոգիական լարվածությունը պատճառ է դառնում Էկոլոգիական ագրեսիայի, որն արտահայտվում է թունավոր տեխնոլոգիաներն ու թափոններն այլ երկրներ տեղափոխելով:
- 4) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:

55

ՀՀ արդյունաբերության տրված ճյուղերից օդային ավազանն առավելապես աղտոտում է.

- 1) թեթև արդյունաբերությունը
- 2) մեքենաշինությունը
- 3) սննդի արդյունաբերությունը
- 4) ջերմաէներգետիկան

56

Գրել ճապոնական կղզեխմբին պատկանող կղզիների համարները.

- | | |
|--------------------|-------------|
| 1) Հոկայդո | 5) Հոնսյու |
| 2) Կրետե | 6) Կյուսյու |
| 3) Ճամայկա | 7) Սիկոկու |
| 4) Նյու Ֆաունդլենդ | 8) Սումատրա |

57

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ.

- | | |
|-----------------|--------------|
| 1) Կանադա | 5) Ճապոնիա |
| 2) Նոր Զելանդիա | 6) Լեհաստան |
| 3) Իրան | 7) Արգենտինա |
| 4) Գերմանիա | 8) Ուկրաինա |

58

Գրել այն մայրաքաղաքների համարները, որոնք իրենց երկրի ամենախոշոր քաղաքը չեն.

- | | |
|-----------|------------|
| 1) Թեհրան | 5) Կահիրե |
| 2) Կիև | 6) Բեյրութ |
| 3) Բեյջին | 7) Անկարա |
| 4) Մինսկ | 8) Բոգոտա |

59

Գրել այն երկրների համարները, որոնք դաշնային պետություններ են.

- | | |
|-------------|-------------|
| 1) Գերմանիա | 5) Բրազիլիա |
| 2) Ուկրաինա | 6) Լեհաստան |
| 3) Ֆրանսիա | 7) Եգիպտոս |
| 4) Իտալիա | 8) Թուրքիա |

60

Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում համեմատաբար մեծ է ծերերի բաժինը.

- | | |
|---------------|-------------|
| 1) Գերմանիա | 5) Պակիստան |
| 2) Աֆղանստան | 6) Եգիպտոս |
| 3) Հնդկաստան | 7) Շվեդիա |
| 4) Ուզբեկստան | 8) Իրան |

61

Գրել նեֆելինային սիենիտի հանքավայրերի համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Թեժ Լեռան | 5) Սվարանցի |
| 2) Կապուտանի | 6) Սոթքի |
| 3) Ագարակի | 7) Հրազդանի |
| 4) Շվանիձորի | 8) Շամլուղի |

62 ՀՀ տրված գետերի համարները դասավորել դրանց ջրաէներգետիկական հզորության նվազման կարգով.

- 1) Արփա 2) Որոտան 3) Հրազդան

63 Տրված պետությունները դասավորել բնակչության թվաքանակի նվազման կարգով.

- 1) Ինդոնեզիա
2) Ճապոնիա
3) ԱՄՆ
4) Ռուսաստան

(64-65). Գետի ջրի արագությունը 0,4 մ/վ է, իսկ կենդանի կտրվածքի մակերեսը՝ 5 մ²:

64 Որոշել գետի ծախսը:

65 Որոշել գետի հոսքը 5 ժամում:

66

Հայկական հրաբխային բարձրավանդակի մակերեսը կազմում է 100 000 կմ²:
Որքա՞ն մակերես կզբաղեցնի այն 1 : 2 000 000 քարտեզում:

67

Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15‰: Տարվա ընթացքում ներգաղթել են 1800 մարդ, իսկ արտագաղթել՝ 700 մարդ: Որոշել երկրի բնակչության թիվը 1 տարի հետո:

68

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ. 35°30' և արմ. ե. 80°:
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ի կեսօրին:

69

Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Գյուղատնտեսությունն աչքի է ընկնում մեքենայացման ու քիմիացման բարձր մակարդակով:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 3) Արտահանման մեջ գերակշռում են բնական գազն ու նավթամթերքները:
- 4) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
- 5) ՀՆԱ-ի կառուցվածքում ամենափոքր բաժինը զբաղեցնում է սպասարկման ոլորտը:
- 6) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը:

70

ՀՀ Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Հողածածկույթում գերակշռում են լեռնաանտառային գորշ հողերը:
- 2) Անասնապահության առաջատար ճյուղն է խոզաբուծությունը:
- 3) Մարզի գյուղերում է ապրում բնակչության մեկ երրորդը:
- 4) Առկա են քրոմիտի և ոսկու պաշարներ:
- 5) Կլիման բարեխառն լեռնային է:
- 6) Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է: